



Անդրանիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՄՆԱՏԱՐՑԵՐԻ ԱՉՊԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը (այսուհետև՝ ՀՀ ԱԱՌ)¹ ներածության մեջ սահմանում է ոչ թե ազգային անվտանգություն հասկացությունը, այլ ՀՀ ԱԱՌ-ի բնորոշումը, որի համաձայն՝ այդ ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Այս բնորոշումից երևում է, որ ՀՀ ԱԱՌ-ն ազգային անվտանգության առարկա է ճանաչում պետությունը, հասարակությունը և անհատին: Ներածությունից հետո գալիս են փաստաթղթի բովանդակային բաժինները, որոնք թվով չորսն են: Առաջին բաժինը կոչվում է «ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, նրա դեմ ուղղված սպառնալիքները», իսկ երկրորդը՝ «Ներքին անվտանգության ռազմավարությունը»: Փաստաթղթի մյուս երկու բաժինները նվիրված են արտաքին անվտանգության հիմնահարցերին, որոնք ծավալային տեսանկյունից գերակշռում են: Երկրորդ բաժնում՝ որպես ներքին անվտանգության ռազմավարություններ, դիտարկվում են չորս ուղղություններ՝ 1. արդյունավետ պետական կառավարում, 2. բանակաշինություն, 3. ազատական տնտեսություն, 4. կյանքի նոր որակ և բարոյահոգեբանական մթնոլորտ²:

ՀՀ ԱԱՌ-ն այս ուղղությունները միաժամանակ դիտարկում է որպես բարեփոխումների ծրագրեր, որոնք կոչված են ապահովելու ազգային անվտանգությունը:

ՀՀ ազգային անվտանգության հիմնարար 5 արժեքներից (անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն և միջազգային համագործակցություն, հայապահպանություն, բարեկեցություն) ոչ մեկն ուղղակիորեն չի վերաբերում պետական համակարգին: Դրանցից ամուղղակիորեն պետությանը վերաբերող կարելի է համարել անկախությունը, որի բովանդակությունը վերարտադրում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը:

ՀՀ ԱԱՌ-ի առաջին բաժնի 2-րդ ենթաբաժնում (Ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները) բացվում են ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողությունները: Մասնավորապես, եթե առաջին բաժնի 1-ին ենթաբաժնում անկախությունը դիտարկվում է որպես ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեք՝ ներառելով Սահմանադրության 1-ին հոդվածը, ապա 2-րդ ենթաբաժնում փորձ է արված թվարկել դրա ապահովման գործոններն ու գործողությունները: Եթե ուսումնասիրենք այդ վեց գործոն-գործողությունների բովանդակությունը, ապա կտեսնենք, որ դրանցից հինգը որևէ կապ չունեն պետության ապարատի հետ, բացառությամբ առաջինի, որն այդ փաստաթղթում ձևակերպված է հետևյալ կերպ. սահմանադրական կարգի, պետականության բոլոր բաղադրատարրերի, պետական կառավարման համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովում: Նման բանաձևը շատ դեկլարատիվ և ընդհանուր է, ինչն ավելի

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն



հարիր կլինե՞ր սահմանադրական որևէ ակտի, քան ԱԱՌ-ին:

Մյուս կողմից իրավական ընդգրկման տեսանկյունից անհասկանալի և անորոշ է պետականության բոլոր բաղադրատարրեր ձևակերպման տիրույթը: Գիտական տեսանկյունից իմաստային էական տարբերություն կա պետություն և պետականություն հասկացությունների միջև: Եթե նույնիսկ պետականություն եզրույթն ընդունենք պետություն իմաստով, ապա այդ դեպքում պետության բաղադրատարրը ձևակերպման տակ կարելի է հասկանալ պետության հետ կապված ամեն ինչ, ընդհուպ մինչև պետական խորհրդանշանները³: Բացի այդ՝ ակնհայտ է բուն հիմնարար արժեքի՝ անկախության և դրա առաջին գործոնի միջև տրամաբանական կապի բացակայությունը. անկախությունն ունի արտաքին-միջազգային իմաստ, իսկ պետականության բոլոր բաղադրատարրերը, պետական կառավարման համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովումը ներպետական, ներհամակարգային ոլորտներ են:

ՀՀ ԱԱՌ-ի 1-ին բաժնի 3-րդ ենթաբաժնում ներքին սպառնալիքներից, որոնք թվով 11-ն են, միայն առաջինն է վերաբերում պետական կառավարման համակարգին: Այն ձևակերպված է հետևյալ կերպ՝ պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազում, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակաս: Այդ սպառնալիքը ՀՀ ԱԱՌ-ում նկարագրված է այսպես՝ «Հայաստանի Հանրապետությունը գտնվում է անցումային շրջանում և բարեփոխումների ակտիվ փուլում: Ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիք կարող են լինել պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը և բարեփոխումների գործընթացի դանդաղումը: Դատական իշխանության արդյունավետ, անաչառ և անկախ գործունեությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի

Հայաստանի համար: Պետական կառավարման համակարգի արդյունավետության կարևոր ցուցանիշ է դրա նկատմամբ հասարակության վստահության մակարդակը»:

Ակնհայտ է, որ անցումային շրջանում գտնվող Հայաստանի համար, ինչպես նշում է ՀՀ ԱԱՌ-ն, զուտ պետությանը վերաբերող ներքին սպառնալիքների շրջանակի մեջ թվարկված են խիստ նեղ, սահմանափակ թվով սպառնալիքներ, այն էլ շատ զգույշ ձևակերպումներով, օրինակ՝ արդյունավետության նվազում: Որպես ազգային անվտանգության ներքին սպառնալիքներ դիտարկվում են՝ ա) արդյունավետության նվազումը, բ) բարեփոխումների գործընթացի դանդաղումը, գ) դատական իշխանության անարդյունավետ, անաչառ, ոչ անկախ գործունեությունը:

Նախ, եթե հետևենք անցումային շրջանի վերաբերյալ տեսական գրականությանը, ապա և՛ արևմուտքում, և՛ հետխորհրդային տարածքում կտեսնենք, որ պետության հետ կապված խնդիրների շրջանակը, որոնք վերաձվել կամ կարող են վերաձվել ազգային անվտանգության սպառնալիքի, շատ ավելին են, քան ՀՀ ԱԱՌ-ի մեջ թվարկվածները: Մյուս կողմից պետական կառավարման ընդհանուր համակարգից չփոխելով ինչու շեշտադրված է միայն դատական իշխանության արդյունավետ, անաչառ, անկախ գործունեության բացառիկ կարևոր նշանակությունը Հայաստանի համար, մի կողմ թողնելով օրենսդիր և գործադիր իշխանությունները: Անշուշտ, արդյունավետությունը շատ կարևոր խնդիր է կառավարման գործընթացում, սակայն այն տեսականորեն բազմիմաստ է, և այստեղ չունի հատուկ իմաստ:

Սակայն ակնհայտ է, որ պետության խնդիրը միայն անարդյունավետությունը չէ: Հենց թեկուզ այն, որ ՀՀ ԱԱՌ-ն ներքին սպառնալիքների շարքում թվարկում է ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակը և որպես դրա

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



դրստորումներ են դիտարկվում ընտրական գործընթացներում առկա հարաբերությունները, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը, վկայում է, որ ՀՀ-ում հավասարապես վստահություն չեն վայելում նաև պետական իշխանության մյուս երկու ճյուղերը՝ օրենսդիրն ու գործադիրը:

ՀՀ ԱԱՌ-ի առավելություններից է այն, որ դրա 2-րդ բաժնում՝ ներքին անվտանգության ռազմավարություն, ծրագրավորվում է բարեփոխումների հայեցակարգ՝ միտված ազգային անվտանգության վտանգների չեզոքացմանը կամ վերացմանը: 2-րդ բաժնի 1-ին ենթակետը վերնագրված է «Արդյունավետ պետական կառավարում»: Քանի որ ՀՀ ԱԱՌ-ն պետական կառավարման համակարգում հիմնական խնդիրը համարում է դրա անարդյունավետությունը, ապա ներքին անվտանգության ոլորտում խնդիր է դրվում բարեփոխումների միջոցով ստեղծել արդյունավետ պետական կառավարման համակարգ:

Երկրորդ բաժնի վերտառությունից բխում է, որ ենթաբաժինը պետք է վերաբերի պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, սակայն չգիտես ինչու, այդ ոլորտում բարեփոխումների ծրագրի նպատակներն են դիտարկվում նաև քաղաքական համակարգի լիարժեք կայացումը, կայունության ապահովումը, ժողովրդավարական արժեքների և առաջին հերթին մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության զարգացումը: Հետևողական գիտական մոտեցման դեպքում նկատելի է, որ այս նպատակները վերաբերում են ազգային անվտանգության ապահովման այլ օբյեկտներին՝ քաղաքացիական հասարակությանը և անհատներին, այլ ոչ թե պետությանը: Դրանք անշուշտ փոխկապված են, բայց, այնուամենայնիվ, պետության իշխանական համակարգի տարրեր չեն: Օրինակ՝ քաղաքական-

կուսակցական համակարգը սերտորեն կապված է պետության հետ, բայց ոչ թե դրա, այլ քաղաքացիական հասարակության ենթահամակարգ է:

Ներքին անվտանգության ռազմավարության ոլորտում արդյունավետ պետական կառավարում ուղղությամբ ՀՀ ԱԱՌ-ն ծրագրում է իրականացնել բարեփոխումներ, որոնք միտված էին լինելու՝

ա) ժողովրդավարական պետության գորացմանը,

բ) պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության ապահովմանը,

գ) դատական իշխանության անկախության և անաչառության ապահովմանը,

դ) տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացմանը,

ե) որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը,

զ) կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացմանը⁴,

է) ճգնաժամային իրավիճակների արդյունավետ կառավարման համակարգի հաստատումը,

ը) իրավապահպանության ոլորտի ռազմավարական բարեփոխումները⁵:

Թե որքանով էին արդիական և հրատապ թվարկված ինստիտուցիոնալ բարեփոխումների ուղղությունները Հայաստանի համար՝ թողնենք մի կողմ: Այստեղ միայն նշենք, որ դրանցից առաջինը՝ ժողովրդավարական պետության գորացումը շատ ընդհանուր գաղափար է: Նույնը կարելի է ասել 2-րդի՝ պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության մասին դրույթի վերաբերյալ: Տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացումն ընդհանրապես պետական համակարգին չվերաբերող խնդիր է:

Նշված թերությունների կողքին ՀՀ ԱԱՌ-ն ունի առավելություն: Դա այն է, որ ՀՀ կայուն և անվտանգ զարգացման



պահանջմունքից ելնելով՝ անհրաժեշտ է համարում պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը՝ բարեփոխումների միջոցով: Տեսականորեն ենթադրվում է, որ այդ բարեփոխումները պետք է լինեին համապարփակ, ամբողջական, համակարգային, վերաբերեին պետական կառավարման համակարգի բոլոր տարրերին: Սակայն, ինչպես նկատեցինք, ՀՀ ԱԱՌ-ում նախապատրաստվելիք ծրագրերը պետական կառավարման բնագավառում աչքի չէին ընկնում համապարփակությամբ (դրանում չկային պետական բոլոր համակարգային տարրերին ուղղված բարեփոխումների ծրագրեր): Ծրագիրն ավելի շատ հատվածական է, քան համընդգրկուն: Հետևաբար՝ ծրագիրը ոչ ամբողջական է, ոչ էլ՝ միասնական: Բարեփոխումների համակարգային բնույթի մասին ևս խոսել հնարավոր չէ, որովհետև պետության՝ որպես ազգային անվտանգության առարկայի հարցում, ՀՀ ԱԱՌ-ն չի որդեգրել համակարգակառուցվածքային մոտեցում, ինչի արդյունքում պետության՝ որպես համակարգի, ոչ բոլոր տարրերն են ընդգրկված բարեփոխումների ծրագրերում:

Հետազոտության առարկայի տեսանկյունից ՀՀ ԱԱՌ-ի վերլուծությունից անցում կատարենք Ռ-Գ համանման փաստաթղթի ուսումնասիրությանը: Ռ-Գ-ն՝ ի տարբերություն, ՀՀ-ի շատ ավելի վաղ՝ դեռևս 1990-ական թթ. սկզբին ստեղծեց ազգային անվտանգության օրենսդրական-իրավական հիմքերը: Այդ ամենը խթանեց տեսական խորը հետազոտությունների իրականացմանը: Արդյունքում՝ Ռ-Գ-ում տեղի է ունեցել ազգային անվտանգության օրենսդրության երրորդ փուլի իրավական համակարգումը՝ արդի պահանջներին ու առանձնահատկություններին, ինչպես նաև արտաքին-քաղաքական իրավիճակին համապատասխան:

Ռ-Գ-ում ազգային անվտանգության ապահովման ոլորտի համար հիմնարար

նշանակություն ունեցավ «Անվտանգության մասին» Ռ-Գ օրենքը, որն ընդունվել է դեռևս 1992 թ. մարտի 5-ին և կրելով որոշ փոփոխություններ՝ գործել է մինչև 2010 թվականը: Այն ամրագրում էր Ռ-Գ-ի ազգային անվտանգության օրենսդրական հիմքերը, անվտանգության համակարգը և դրա գործառնությունները, անվտանգության սուբյեկտները, ուժերը և միջոցները, ազգային անվտանգության ապահովման գործում պետական մարմինների լիազորությունները: «Անվտանգության մասին» 1992 թ.-ի Ռ-Գ օրենքը հատուկ և մանրամասն վերլուծության չենք ենթարկի, որովհետև այն նախ 2010 թ. կորցրել է իր իրավաբանական ուժը, երկրորդ՝ այս պարագրաֆի բովանդակությունը կազմող հիմնահարցերին այն չէր անդրադառնում, ինչը ևս թերություն էր: Այդ օրենքի թերություններից էր նաև այն, որ դրանում անվտանգության տեսակների մեջ բացակայում էր քաղաքական անվտանգության մասին նույնիսկ հիշատակումը, առավել ևս դրա բովանդակության բացահայտումը:

Ռ-Գ օրենսդիրը 2010 թ. դեկտեմբերի 28-ին ընդունեց «Անվտանգության մասին» նոր օրենքը, որով ամրագրվեցին ազգային անվտանգության իրավական ապահովման գործող հիմքերը: Օրենքը պարունակում է մի շարք նոր դրույթներ, սակայն պահպանել է նախորդի կառուցվածքային ու հայեցակարգային հաջորդայնությունը: Հեղինակները նկատում են և՛ առավելություններ, և՛ թերություններ, որոնց վերլուծությանը չենք անդրադառնա, քանի որ օրենքն ավելի շատ կարգավորում է ազգային անվտանգության կենսագործման կառավարման հանրային-իշխանական կառուցակարգը, այլ ոչ թե մեզ հետաքրքրող հիմնահարցերը:

Ռ-Գ ազգային անվտանգության ռազմավարությունը, որն ընդունվել է 2009 թ. մայիսի 12-ին և ենթարկվել է խմբագրության Ռ-Գ նախագահի 2014 թ. հուլիսի 1-ի հրամանագրով, մինչև 2020 թ. (այսուհետ՝ Ռ-Գ ԱԱՌ) շեշտադրում է ոչ միայն կեն-



սականորեն կարևոր շահերի պաշտպանությունը, այլ նաև անվտանգությունը զարգացման միջոցով: Այն կառուցված է մի կողմից պետության ու հասարակության, իսկ մյուս կողմից էլ՝ անվտանգության փոխկապվածության ու փոխկախվածության հիմնարար դրույթի վրա:

Ռ-Դ ԱԱՌ-ն խարսխված է ազգային անվտանգության բովանդակությունը կազմող հասկացությունների վրա: Ազգային անվտանգության կարգավորման նախորդ տարբերակի համեմատ Ռ-Դ ԱԱՌ-ն խմբագրեց ազգային շահեր և ազգային անվտանգության սպառնալիքներ հասկացությունները, ազգային շահերի տակ հասկանալով պետության ներքին և արտաքին պահանջումներն՝ անհատի, հասարակության և պետության պաշտպանվածության ու կայուն զարգացման ապահովման գործում: Ազգային անվտանգության սպառնալիքն ուղղակի կամ անուղղակի հնարավորությունն է վնաս հասցնելու քաղաքացիների սահմանադրական իրավունքներին, ազատություններին, կյանքի արժանապատիվ որակին և մակարդակին, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, Ռ-Դ կայուն զարգացմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը⁶:

Այժմ Ռ-Դ ԱԱՌ-ի տեսանկյունից վերլուծության ենթարկենք պետությունը՝ որպես ազգային անվտանգության առարկայի հիմնահարցը: Այդ հարցում Ռ-Դ ԱԱՌ-ն ելնում է օբյեկտների եռմասնական մոտեցումից, այն է՝ անհատ, հասարակություն, պետություն և դրանց պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից: Այդ հիմքով են կառուցված նաև ազգային անվտանգության հիմնական հասկացությունների բնորոշումները: Սակայն Ռ-Դ ԱԱՌ-ն հետագա բաժիններում պետության՝ որպես ազգային անվտանգության առարկայի հիմնահարցերը, լիարժեքորեն և հետևողական չեն արտացոլում: Մասնավորապես, 4-րդ բաժնի (Ազգային անվտանգության

ապահովումը) 2-րդ ենթաբաժինը վերնագրված է Պետական և հասարակական անվտանգություն» վերտառությամբ: Ակնհայտ է, որ մեկ ենթաբաժնում (35-44 կետեր) միավորված են երկու օբյեկտներին (պետությանը և հասարակությանը) վերաբերող հիմնահարցերը: Ընդ որում՝ 10 կետերից շատերը նվիրված են ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետության՝ որպես սուբյեկտի, պարտավորություններին, այսինքն՝ ինչ պետք է անի, այլ ոչ թե ինչպիսին պետք է լինի պետությունը: Այդ գործառնության պարտավորությունների ամփոփ պատկերը հետևյալն է.

Առաջին. իրավախախտումների դեմ պայքարի անընդհատ կատարելագործվող իրավապահպան միջոցառումների ձեռնարկում՝ ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացում, կանխելու հասարակական հարաբերությունների կոռումպացվածությունը և քրեականացվածությունը: Այդ միջոցառումներից միայն կոռումպացվածությունն է վերաբերում պետական կառույցներին և նշում, թե ինչպիսին պետք է լինի պետության ուղղվածությունը, քանի որ այդ գործառնության իրականացմամբ պետությունը պետք է առողջացնի ինքն իրեն:

Երկրորդ. դաշնային գործադիր իշխանության մարմինների կառուցվածքի և գործունեության կատարելագործում, որն ամրագրված է փաստաթղթի 40-րդ կետում: Սա միակ խնդիրն է, որը հետապնդում է պետական կառուցակարգի բարելավում, կատարելագործում, դիտվում է որպես պետական ու հասարակական անվտանգության ապահովման նպատակների ապահովման միջոց:

Մրանով ավարտվում է Ռ-Դ ԱԱՌ-ի ուղղակիորեն պետությանը սպառնացող վտանգների շրջանակը: Անուղղակիորեն պետությանը վերաբերող ազգային անվտանգության ռազմավարական նպատակներ են ճանաչվում նաև Ռ-Դ սահմանադրական կարգը (իսպրկե, դրա՝ պետությանը վերաբերող հիմնադրույթ-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

ները), ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը: Ինքնիշխանությունը՝ որպես պետության հատկանիշ, ենթադրում է պետության անկախություն ներքին և արտաքին ուժերից: Դրան սպառնացող վտանգները կարող են ունենալ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրներ ու գործոններ: Այդպիսով՝ արտաքին անկախությունը կոնկրետ պետության համար կարող է վերածվել ազգային անվտանգության կարևորագույն արժեքի, իսկ մեկ այլ պետության համար դրա չափավորումը միջոց է ազգային անվտանգության նպատակներին հասնելու, սպառնացող վտանգները չեզոքացնելու, կանխելու համար: Այդ մոտեցումը, այսինքն՝ անկախությունը որպես արժեք, դրված է նաև ՀՀ ԱԱՌ-ի հիմքում:

Արված վերլուծությունը թույլ էր տալիս եզրակացնելու, որ ՌԴ ԱԱՌ-ն ևս անհավասարակշիռ մոտեցում ունի ազգային անվտանգության օբյեկտների սպառնալիքների իմաստավորման, դրանց համակարգային ու ամբողջական բացահայտման գործում: Ասվածը հատկապես վերաբերում է պետության՝ որպես ազգային անվտանգության առարկայի խնդրին: Անցումային և բավականին բարդ շրջան ապրող ՌԴ-ի համար պետական համակարգի ազգային անվտանգության հիմքերի շրջանակը ներկայացված է բավականին նեղ, իսկ հատուկ քաղաքական պետական բաղադրիչ (բաժին) այն ընդհանրապես չունի: Քաղաքագիտական և իրավագիտական գրականության մեջ ՌԴ-ի որպես պետության հիմնախնդիրները ներառում են հարցերի բավականին լայն ու բարդ շրջանակ, որոնք արտացոլված չեն ազգային անվտանգության ռազմավարության մեջ: Ինչու՞մ է պայմանավորված և՛ ՀՀ ԱԱՌ-ի, և՛ ՌԴ ԱԱՌ-ի նման թերությունները:

Խորքային վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ դրա հիմքում ընկած են մի շարք պատճառներ: **Առաջինը պատճառը** այն է, որ անվտանգության

իրավական ինստիտուտը փոխառված է արևմուտքի զարգացած երկրներից: Որպես կանոն, այս երկրներում բուն պետության հետ կապված խնդիրներն այդքան սրված չեն, որպեսզի վերածվեն ազգային անվտանգության սպառնալիքի: Այդ երկրները մեծամասամբ կայացած, ժողովրդավարական, իրավական պետություններ են: Հետևաբար, այդ օրինակելի ժողովրդավարության ու իրավական պետության ազգային անվտանգության ռազմավարությունները կամ հայեցակարգերը չեն շեշտադրում պետական համակարգի սպառնալիքները, դրանց վտանգները, պետության կառուցակարգի բարեփոխումները՝ ազգային անվտանգության համատեքստում: Պետական բարեփոխումներն այստեղ գնում են ընդհանուր հունով, այլ ոչ թե ազգային անվտանգության լույսի ներքո:

Երկրորդ պատճառն ազգային անվտանգության ռազմավարության՝ որպես պաշտոնական փաստաթղթի, քաղաքական-իրավական բնույթն է: Այն հիմնականում մշակվում է երկրի քաղաքական բարձրագույն ընտրանու հովանու ներքո, որի համար դժվար է խոստովանել, որ պետությունն ունի ազգային անվտանգության հետ կապված շատ խնդիրներ, հետևաբար նաև բարեփոխումների կարիք: Արդյունքում՝ պետությանը վերաբերող սպառնալիքները վեր են հանվում ոչ համալիր և ոչ ամբողջական, երբեմն նաև թաքցվում են և դրանով իսկ այդ կարևորագույն հարցում որդեգրվում է «ջայլամի քաղաքականություն»:

Երրորդ պատճառը տեսությամբ պայմանավորված թերություններն են: Անվտանգաբանությունը մեծամասամբ հետախորհրդային շրջանում կայացող ոլորտներից է, որի սկզբնական շրջանի հիմնական միջոցն արևմտյան «սեկտորի-տոլոգիայից» ընդօրինակումն էր: Վերջինս ամենից շատ ուղղորդված է դեպի արտաքին անվտանգության, իսկ ներքին ոլորտում՝ հասարակության անվտանգության հարցերին: Սեխանիկական ըն-



դորինակման արդյունքում առաջացել է տեսական բաց, որն էլ նպաստում է պետաիրավական ոլորտի կարգավորման բացերին ու թերություններին: Ներկա պահին անհրաժեշտ է գիտական հետազոտության առարկա դարձնել անվտանգության այն հիմնադրույթները, որոնք վերաբերում են պետությանը, նրա կառուցակարգին:

Եզրակացությունների այս ֆոնի վրա անհրաժեշտ է նշել, որ իր թերություննե-

րով հանդերձ ՀՀ ԱԱՌ-ն մի քայլ առաջ է ՌԴ համանման փաստաթղթից, որով հետևելով այն արժարժում է պետական համակարգին վերաբերող հարցերի ավելի լայն շրջանակ, քան ՌԴ-ի իր նմանակր: Սակայն դա չի նշանակում, որ այն ամբողջական ու համալիր է պետության՝ որպես ազգային անվտանգության առարկայի և դրա ներքին սպառնալիքների բացահայտման հետազոտական հիմնախնդրում:

- 1 ՀՀ ԱԱՌ-ն մշակվել է ՀՀ նախագահի 2005 թ. դեկ. 15-ի կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից և հաստատվել է նախագահի 2007 թ. փետ. 7-ի հրամանագրով: Մինչ այդ՝ 2007 թ. հունվարի 26-ին այն արժանացել է ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի հավանությանը:
- 2 Իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից փաստաթղթի ներքին կառուցվածքը չի համապատասխանում դրա ընդունման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Այդ օրենքը ընդունվել է 03.04.2002-ին և ուժի մեջ է մտել 2003 թ. հունվարի 1-ից: Օրենքի 37 հոդ. սահմանում էր իրավական ակտի կառուցվածքի հետ կապված իրավակարգավորումները: ՀՀ ԱԱՌ-ն, բացի համարակալված բաժիններից, տրոհված չէր ոչ հոդվածների, ոչ էլ կետերի, այլ միայն առանց համարակալման պարբերությունների, ինչը խախտում է իրավական ակտի կառուցվածքի տրամաբանական միասնության ու օգտվելու հարմարավետության պահանջները:
- 3 Այստեղ նույնիսկ լեզվական թերություն կա: Սահմանադրական կարգի կամ պետության բոլոր բաղադրատարրերի «գործունեություն» ձևակերպումը թյուրիմացություն է, քանզի գործում է միայն սուբյեկտը, իսկ սահմանադրական կարգը կամ մասնավոր դեպքում՝ դրոշը և հիմնը, որպես բաղադրատարրեր, սուբյեկտներ չեն և չեն

- կարող գործել:
- 4 Ներքին անվտանգության ռազմավարության «արդյունավետ պետական կառավարում» ենթաբաժնի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությունը ձևակերպված է այսպես՝ «Այս նպատակով ՀՀ-ն իրականացնում է համապատասխան պետական հեռանկարային ծրագրեր, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր, վարչական արդարադատության համակարգի ձևավորման և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման նախագծեր»: Ենթադրվում է, որ այս դրույթները վերաբերում են վերը բերված թվարկման գ) կետին՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրային տարրեր:
- 5 Իրավապահպան ոլորտի ռազմավարական բարեփոխումներն ուղղված են լինելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների սպառնալուծմանը, հակաիրավական ոտնձգություններից պետության, հասարակության և անհատի պաշտպանությանը:
- 6 Տեսական գրականության մեջ ազգային անվտանգության սպառնալիքների հաջողված բնորոշումներից է հետևյալ սահմանումը. «ազգային անվտանգության սպառնալիքը պայմանների ու գործոնների համակցություն է, որն ստեղծում է վտանգ ազգի և դրա գործառութային բաղադրատարրերի՝ անհատի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի համար»:

RESUME - РЕЗЮМЕ

THE ISSUE OF THE STATE IN THE NATIONAL SECURITY STRATEGY

Andranik Gevorgyan

Ph.D. student at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

Through the theoretical-legal analysis it can be stated, that state-related threats are not clearly and completely reflected in security strategies and this is the primary reason that there is a bunch of gaps and imperfections in political-legal sphere regarding national security policies. The national security policy of RA is a step ahead of the homologous paper in Russian Federation. The think is that the Armenian one raises more questions regarding threats related to the state system. Nevertheless we can not state that the national security policy of RA is complex and entire regarding normative regulation of the state as the object and including all domestic-internal threat disclosure problems.

Keywords: *security, security policy, state, object, internal threat.*

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВО В СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Геворгян Андраник

Аспирант Института философии, социологии и права НАН РА

В статье на основе теоретического анализа обосновывается идея о том, что в стратегиях национальной безопасности угрозы, относящиеся к государству, отражены не полностью и не комплексно, а также выясняются причины пробелов и недостаточно эффективного регулирования проблем государственно-правовой сферы. Стратегия национальной безопасности РА в этом аспекте опережает стратегию РФ, поскольку затрагивает большее количество проблем государственной системы. Однако это не означает, что она полностью и комплексно решает вопросы государства как объекта национальной безопасности и определяет его внутренние угрозы.

Ключевые слова: *безопасность, стратегия безопасности, государство, объект, внутренняя угроза.*

Բանալի բառեր - *անվտանգություն, անվտանգության ռազմավարություն, պետություն, օբյեկտ, ներքին սպառնալիք:*

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն